# «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկություն» հիմնադրամի գործունեությունը

***Մովսիսյան Ֆելիքս***

***Հանգուցային բառեր.*** Լեհահայեր, մշակույթ, ժառանգություն, պահպանություն, հիմնադրամ, գիտաժողովներ, հանդիպումներ, արխիվ, հայկական օրեր

Ժամանակակից Լեհաստանի հին ու նոր հայ համայնքն ակտիվորեն մասնակցում է երկրի գիտամշակութային կյանքին և ծավալում է հասարակական համակողմանի բեղմնավոր գործունեություն: Դրանով զբաղվում են մի շարք հայկական կազմակերպություններ, ընկերություններ ու միություններ, որոնց թվում հայանպաստ գործունեությամբ առանձնանում է հատկապես «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկություն» հիմնադրամը:

Հայ պատմամշակութային ժառանգության ճակատագրով անհանգիստ մի խումբ լեհահայեր ամիսներ շարունակ գործադրած ջանքերի շնորհիվ կարողացան հավաքել և կենտրոնացնել մեծ քանակությամբ բազմալեզու անտիկ ձեռագրեր, հնատիպ գրքեր, Արևելյան Կրեսների հայ կաթողիկե եկեղեցիների ծխական մատյաններ, թերթեր, պարբերականներ, հագուստներ, նկարներ, եկեղեցական պարագաներ, անվանի հայերի անհատական արխիվ և իրեր, որոնք դարերի ընթացքում բարեբախտաբար չէին վնասվել:

Ազգանվեր այդ գործը լեհահայերին հանգեցրեց այն մտքին, որ անհրաժեշտ է ստեղծել մի կազմակերպություն, որը կզբաղվի լեհահայոց պատմամշակութային ժառանգության և հուշարձանների պահպանությամբ: Մշակութային այդ ժառանգությունը Հայ կաթողիկե եկեղեցու սեփականությունն էր, ուստի մի խումբ լեհահայ մշակութային ու հասարակական գործիչներ 2006թ. ապրիլի 7-ին խնդրանքով դիմեցին հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ կարդինալ Յուզեֆ Գլեմպին: Նա ընդառաջեց այդ խնդրանքին և 2006թ. ապրիլի 13-ին Վարշավայում լեհահայերի նախաձեռնող խմբի անդամների հետ միասին հրավիրեց հիմնադիր ժողով, որն ստեղծեց «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկություն» (ԼՄԺՀ, Fundacji Kultury i Dziezictwa Ormian Polskich): Ժողովը հաստատեց հիմնարկության կանոնադրությունը, որը կազմակերպության գլխավոր նպատակը համարում է լեհահայերի մշակութային ժառանգության և արժեքների պահպանությունը և «Ռեչ Պոսպոլիտայի Կրեսների մշակույթի ու պատմության տարածումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով լեհահայոց պատմությանն ու մշակույթին»[1]:

Հիմնադրամի վարչության կազմում ընտրվեցին լեհահայ հին համայնքի ճանաչված հասարակական գործիչներ Էվա և Յան Աբգարովիչները, Վալդեմար Դելուգան, Մարիա Սիերոկա Պոսպիեխը և Քրիստինա Օհանովիչ-Ադամսկան: Հիմնադրամի խորհրդի կազմում ընդգրկվեցին Մոնիկա Ագոպսովիչը, Քշիշտոֆ Ստոպկան, Յեզարի Աննուսիևիչը, Վոյցեխ Զախարիասևիչը, Ստեֆան Մոշոր-

[1] Czasopismo ormianskie. Awedis Աւետիս, 2016 lato, nr. 27, s. 6.

Դուբրովսկին, Ռոմանա Օբրոսկան, Ալեքսանդր Սենիուկը: Հիմնադրամի վարչության առաջին նախագահ ընտրվեց Էվա Աբգարովիչը, իսկ խորհրդի նախագահ՝ Կրակովի Յագելլոնյան համալսարանի թանգարանի տնօրեն, պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկան[2]:

2007թ. հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ դարձած կարդինալ Կազիմեժ Նիշը շարունակեց սատարել հիմնադրամի գործունեությանը: ԼՄԺՀ հիմնադրամը ստեղծման օրից մեծ ծավալի աշխատանք է կատարում լեհահայերի պատմության վերաբերյալ փաստաթղթերի, վավերագրերի, լուսանկարների ու ձեռագրերի հավաքման և հայկական հուշարձանների պահպանման ուղղությամբ: Հիմնադրամն իր առջև խնդիր է դրել հավաքված արխիվային նյութերի ուսումնասիրության հիման վրա ցույց տալ դարերի ընթացքում լեհահայերի ներդրումը ոչ միայն Ռեչ Պոսպոլիտայի, այլև Լեհաստանի հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում:

Հիմնադրամը միաժամանակ գործնական քայլեր է իրականացնում Լեհաստանում և Արևմտյան Ուկրաինայում պահպանվող հայկական հուշարձանների, եկեղեցիների, գերեզմանատների վերանորոգման և վերականգնման ուղղությամբ: ԼՄԺՀ իր գործունեության մասին մշտապես նյութեր է տեղադրում համացանցում՝ դրանք հասանելի դարձնելով լեհահայերի մշակութային ժառանգությամբ հետաքրքրվող գիտական հանրությանն ու հետաքրքրասերների լայն շրջաններին[3]:

Սկսած 2009թ.՝ հիմնադրամը թողարկում է «Լեհահայերը հին լուսանկարներում» օրացույցը, որի հեղինակ պրոֆեսոր Անդժեյ Զիեմբան լեհ հանրությանը ներկայացնում է հայկական ծագումով անվանի լեհերին ու նրանց մատուցած ծառայությունները Լեհաստանին[4]:

ԼՄԺՀ նախաձեռնությամբ հարյուրավոր լեհահայերի ու նրանց բարեկամ լեհերի մասնակցությամբ 2009թ. հոկտեմբերի 17-ին Վարշավայի «Պատմության հետ հանդիպման տանը» տեղի ունեցավ «Awedis Ավետիս» թերթի շնորհանդեսը: Թերթը մտահղացված է որպես լեհահայ համայնքի արեռպագ, որի գլխավոր նպատակը ժամանակակից Լեհաստանի հայության համախմբումն է և նրա սոցիալ-մշակութային կյանքի լուսաբանումը: Թերթն անվճար է և առաքվում է Հայ Սփյուռքի կենտրոնները: «Ավետիսը» լույս է տեսնում լեհերեն, իսկ որոշ հոդվածներ թարգմանվում են հայերեն: Թերթի գլխավոր խմբագիրը մինչև 2014թ. հիմնադրամի ակտիվ գործիչներից Արմեն Արտվիխն էր: Հիմնադրամի միջոցներով եռամսյակը մեկ լույս տեսնող «Ավետիսը» պարբերաբար տպագրում է լեհահայե-

[2] Տե՛ս Ormianska Warszawa Հայոց Վարշաւան Armenian Warszaw. Krzysztof Stopka, Andrzej A. Zieba, Armen Artwich, Monika Agopowicz, Warszawa, 2012, s. 174-175.

[3] Հիմնադրամի գործունեության մասին մանրամասն տե՛ս http://dziedzictwo.ormianie.pl/images/stories/SprawozdznieFKIDOP

[4] Տե՛ս Ormianska Warszawa, s. 174.

րի պատմությանը և մշակույթին նվիրված հոդվածներ, լուսաբանում հայ համայնքի բազմակողմանի գործունեությունը և նրանում տեղի ունեցող նշանակալից բոլոր իրադարձությունները: Լույս է տեսել թերթի 32 համար[5]: Ներկայումս թերթի գլխավոր խմբագիրը Յակուբ Կոպչինսկին է: Թերթի խմբագրական խորհրդում ընդգրկված են լեհ հայտնի հայագետներ և հայ համայնքի ճանաչված դեմքեր Մոնիկա Ակոպսովիչը, Արմեն Արտվիխը, Վլադիսլավ Դենցը, Հայկ Հովհաննիսյանը, Բոգդան Կասպրովիչը, Փիրուզա Մնացականյանը, Մարիա Օգանովիչ-Տրասյուկը, Գագիկ Պարսամյանը, Գարիկ Սարգսյանը, պրոֆեսորներ Անդժեյ Պիսովիչը և Արա Սայեղը[6]:

2009թ. հունիսի 8-ին հիմնադրամը Լեհաստանի Գիտելիքների ակադեմիայի Արևելաեվրոպական հանձնաժողովի և Յագելլոնյան համալսարանի պատմության ֆակուլտետի հետ միասին Կրակովում անցկացրեց գիտաժողով՝ «Կրակովի հայերը» թեմայով: Զեկուցումներով հանդես եկան մի շարք լեհ հայագետներ և լեհահայեր: Գիտաժողովի շրջանակներում անցկացվեց բանավեճ՝ «Լեհահայերը. Ի՞նչ հեռանկարներ» թեմայով: Բանավեճին մասնակցեցին լեհ ուսումնասիրողներ Քշիշտոֆ Ստոպկան, Անդժեյ Պիսովիչը, Անդժեյ Զիեմբան, Բեատա Յուրաշեկ-Կոպաչը, Տադեուշ Կուրան, լեհահայեր Ադամ Տերլեցին, Մաչեյ Բոհոսիևիչը, Լուկաշ Աբգարովիչը, Մոնիկա Ագոպսովիչը, Պավել Նեչույա-Օստրովսկին, Գագիկ Պարսամյանը, Կարեն Յեմեջյանը, Գոհար Խաչատրյանը և ուրիշներ: Բանավեճի սղագրությունը 2010թ. ամբողջությամբ լույս տեսավ «Լեհահայեր. Lehahajer»[7] ժողովածուի մեջ: Քշիշտոֆ Ստոպկայի խմբագրած այս ժողովածուի մեջ միաժամանակ զետեղված է հայ և լեհ ուսումնասիրողների 30-ից ավելի հոդված՝ նվիրված լեհահայերի պատմությանը, մշակույթին և հայ համայնքի գործունեությանը:

ԼՄԺՀ հիմնադրամի հովանավորությամբ 2012թ. դեկտեմբերի 2-ին Վարշավայում տեղի ունեցավ Քշիշտոֆ Ստոպկայի, Անդժեյ Զիեբայի, Արմեն Արտվիխի և Մոնիկա Ագոպսովիչի հեղինակած «Հայոց Վարշավան» գրքի շնորհանդեսը[8]: Լեհ ուսումնասիրողները նրանում արխիվային նորահայտ փաստաթղթերի և նյութերի հիման վրա ցույց են տալիս հայության մեծ ներդրումը Լեհաստանի տնտեսության, գիտության, արվեստի և մշակույթի ոլորտներում, վերանայում են լեհահայերի կյանքում Վարշավայի դերի մասին լեհ պատմագրությունում ամրագրված կարծիքը: Գիրքը մեծ հետաքրքրություն առաջ բերեց գիտական շրջաններում, որի համար 2013թ. ճանաչվեց տարվա լավագույն պատմական գիրք, արժանացավ «Ոսկե արծվառյուծ» մրցանակի և ամենահեղինակավոր ԿԼԻՈ (KLIO) գիտական

[5] Awedis Աւետիս հանդեսը կարելի է ընթերցել czasopisimo ormianskie Awedis Աւետիս http://www.awedis.ormianie.pl կայքում:

[6] Տե'ս www.kievao.com.ua

[7] Տե'ս Լեհահայեր. Lehahayre czasopisimo poswiecone dziejom Ormian polskich 1, pod redakcja Krzysztofa Stopki, Krakow, 2010, s. 175-208.

[8] Տե'ս Ormianska Warszawa Հայոց Վարշաւան Armenian Warszaw. Warszawa, 2012.

մրցանակի[9]: Գրքի հեղինակները հետագայում արժանացան նաև Լեհաստանի կառավարության պարգևների:

2010թ. լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը հաստատեց իր խորհրդանիշը, որը դարձավ Ջատկի գառը կամ այլ կերպ ասած Աստծո գառը՝ հռոմեական «լաբարում» դրոշով[10]: Հայերն իրենց գառնուկին Լեհաստան տարել են ամենայն հավանականությամբ Ղրիմից, որտեղ այս խորհրդանիշը գոյություն ուներ առնվազն XIV դարից: Գառնուկը պատկերված էր հայկական եկեղեցիների և վանքերի պատերին, Կաֆֆայի, իսկ XVII դարում՝ Լվովի հայերի զինանշանն էր: Այն իրենց անհատական կնիքներում օգտագործել են լեհահայ կաթողիկե եկեղեցու առաջնորդներ Նիկոլ Թորոսովիչը, Քշիշտոֆ Բերնատովիչը, վաճառական Պասխալիս Յակուբովիչը, առևտրական Զախարիաշ Մըսրովիչը: Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամի խորհրդանիշի հեղինակը լեհ դիզայներ Կլաուդիա Մաշլեյն է:

2005թ. ապրիլի 19-ին Եվրոխորհրդարանի պատգամավոր, Սեյմի փոխմարշալ Կազիմեժ Միխայ Ույազդովսկին, պատգամավոր Մարեկ Յուրեկը, Լեհահայոց մշակույթի ու ժառանգության հիմնադրամի խորհրդի անդամ Յան Աբգարովիչը լեհահայ համայնքի աջակցությամբ Լեհաստանի Սեյմի քննարկմանը ներկայացրին Հայոց ցեղասպանությունը ճանաչող նախագիծ, որն առանց քննարկման պատգամավորներն ընդունեցին միաձայն[11]: Սեյմի որոշումը մեծ ոգևորություն առաջացրեց լեհահայ համայնքի և հայ հասարակական կազմակերպությունների շրջանում, որոնք սկսեցին Լեհաստանի տարբեր քաղաքներում տեղական համայնքների աջակցությամբ խաչքարեր տեղադրել՝ նվիրված Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին: Լեհահայերի և նրանց բարեկամ լեհերի մասնակցությամբ հետագա տարիներին խաչքարեր տեղադրվեցին Էլբլոնգում, Գդանսկում, Գլիվիցեում, Կլեբարկում, Վրոցլավում, Վարշավայում, Լոձում, Լյուբլինում[12]:

ԼՄԺՀ 2009թ. հոկտեմբերի 17-ից դեկտեմբերի 6-ը Վարշավայի «Պատմության հետ հանդիպման տանը» կազմակերպեց «Հայացքն Արարատին. Հայերի ճա-

[9] Տե'ս Avedis Աւետիս, 2013, nr. 15, s. 4; 2013 zima, nr. 17, s. 2; 2016, wiosna, nr. 26, s. 2.

[10] Լաբարում (լատիներեն՝ Agnus Dei com labaro) Հին Հռոմում անվանում էին լեգեոնների զինանշանների մի տեսակը, որը կիրառվում էր կայսեր ներկայությամբ: Այն ուղղանկյուն մանուշակագույն դրոշ էր՝ ներքևի մասում զարդարված ոսկեգույն կախվող ծոպերով, որը քրիստոնյաների համար դարձավ Հիսուսի հարության և մթության ուժերի դեմ հաղթանակի խորհրդանիշը: Քրիստոնեական սրբապատկերներում կանգնած գառնուկը առջևի աջ ոտքով բռնել է վեր պարզած «լաբարում» դրոշաձողը: Գառնուկի առաջ դրված է գավաթ, որտեղ լցվում է զոհաբերության արյունը:

[11] Տե'ս Uchwala Sejmu Rzeczypospolitej Polski ej z dnia 19 kwietnia 2005 r. w 90 rocznice ludobojstwa popelnionego na ludnosci ormianskej w Turcji podczas / wojnyswiatowej.sejm.gov.pl

[12] Տե'ս Збигнев Шмурло, Армянские хачкары в Польше. В «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2014, էջ 415-418:

կատագիրը Լեհաստանում» խորագրով ցուցահանդես: Դրա շրջանակներում լեհահայ Զբիշեկ Կորդիսը ներկայացրեց «Հայերի հավաքական դիմանկարներ 2009թ.» լուսանկարների ցուցադրում: Ցուցահանդեսին զուգահեռ հոկտեմբերի 17-18-ին անցկացվեցին «Հայկական օրեր», Վարշավայում կազմակերպվեց էքսկուրսիա «Հայերի հետքերով»: Ցուցահանդեսի փակման օրը ներկայացվեց «Հայկական սիրտը Լեհաստանի համար» փաստագրական ֆիլմը՝ նվիրված արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի հիշատակին[13]: Լեհահայ անվանի այս հոգևոր գործչի հիշատակը հավերժացնելու նպատակով ԼՄԺՀ հիմնադրամը 2010թ. մայիսի 9-ին Գդանսկի սուրբ Պետրոսի և Պողոսի եկեղեցու պատին հանդիսավորությամբ բացեց նրան նվիրված հուշատախտակ[14]:

2010թ. ապրիլի 27-30-ին Զամոշչում տեղի ունեցավ «Հայ սփյուռքի մշակույթը» խորագրով միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին տարբեր երկրների 40-ից ավելի գիտնականներ: Գիտաժողովի ընթացքում ԼՄԺՀ ջանքերով ներկայացվեց հայ մշակույթին նվիրված «Ars Armeniaca» ցուցահանդես[15]:

ԼՄԺՀ ֆինանսավորմամբ 2010թ. Լվովում ձեռնամուխ եղան XV դարի փայտե մատուռի և «Գողգոթա» քանդակի վերականգնմանը, որը տեղադրված է հայկական Մայր տաճարի բակում[16]: 2013թ. սեպտեմբերի 14-15-ին տեղի ունեցավ «Գողգոթայի» բացման արարողությունը, որը վերածվեց հայկական մշակույթի տոնակատարության[17]:

Հիմնադրամը դեկտեմբերի 5-ին Վարշավայում կազմակերպեց հերթական «Հայկական օրը», որի ժամանակ, ի թիվս այլ միջոցառումների, ներկայացրեց լեհահայոց վիրտուալ արխիվը[18]: Թվայնացված այս արխիվը ներառում է բազմաթիվ ձեռագրեր, հնատիպ գրքեր, թերթեր ու ամսագրեր, նկարներ, լուսանկարներ, պաշտամունքի իրեր, ձայնագրություններ ու ժապավեններ[19]: 2011թ. մարտի 30-ին Վարշավայում Լեհահայոց մշակույթի ու ժառանգության հիմնարկության լեհահայոց արխիվը բացեց իր նոր գրասենյակը, որն օծեց կարդինալ Կազիմիեժ Նիչը[20]:

2011թ. սեպտեմբերին ԼՄԺՀ նախաձեռնությամբ լեհահայ համայնքի անունից Գագիկ Պարսամյանը Երևանում Մատենադարանին հանձնեց Սկևռայի ավետարանը, որը վկայում է Լեհաստանում հայերի դարավոր ներկայության մասին[21]:

---

[13] Տե՛ս Avedis Աւետիս, 2014 wiosna, nr. 2, s. 9.
[14] Տե՛ս Avedis Աւետիս, 2010 lato, nr. 3, s. 2.
[15] Տե՛ս Avedis Աւետիս, 2010 lato, nr. 3, s. 1-5.
[16] Տե՛ս Avedis Աւետիս, 2010 jesien, nr. 4, s. 3.
[17] Տե՛ս Avedis Աւետիս, 2013 jesien, nr. 16, s. 1-2.
[18] Համացանցում այս արխիվը մատչելի է www.archiwum.ormianie.pl կայքում:
[19] Տե՛ս Avedis Աւետիս, 2014 zima, nr. 5, s. 1-5.
[20] Տե՛ս Avedis Աւետիս, 2011 wiosna, nr. 6, s. 1,3.
[21] Տե՛ս Avedis Աւետիս, 2011 jesien, nr. 8, s. 1, 6.

ԼՄԺՀ հիմնադրամը 2011թ. Վրոցլավի Ազգագրության թանգարանում և Վարշավայի «Պատմության հետ հանդիպման տանը» ներկայացրեց «Հայացքն Արարատին. Հայերի ճակատագիրը Լեհաստանում» հերթական ցուցահանդեսը, որն ուղեկցվեց հինգ միջոցառումներով: Կրակովում, Գլիվիցեում և Յարոսլավում ցուցադրվեց «Մեծ մոռացվածը. Լեհահայոց արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչ (1864-1938) ականավոր լեհ հոգևորական և պետական այր» խորագրով ցուցահանդես: Հիմնադրամի համահեղինակությամբ կարդինալ Ստեփան Վիշինսկու անվան համալսարանում անցկացվեց «Հայերը Լվովում. պատմություն, մշակույթ, արվեստ» խորագրով գիտաժողով[22]:

ԼՄԺՀ հրատարակած «Ավետիս» թերթը 2012թ. ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից անցկացվող «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» համահայկական մրցանակաբաշխությունում «Հայկական լրատվամիջոց» անվանակարգում ճանաչվեց մրցանակակիր[23]:

2013թ. ԼՄԺՀ կառավարման երրորդ ժամկետի համար ընտրեց կառավարման նոր խորհուրդ՝ հետևյալ կազմով՝ Յան Աբգարովիչ՝ նախագահ, Արմեն Արտվիխ՝ փոխնախագահ, Արմեն Յավորսկի՝ քարտուղար[24]:

2013թ. նոյեմբերի 30-ին Մազովշեի վոյեվոդա Յացեկ Կոզլովսկին Լեհաստանի Հանրապետության նախագահի անունից Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամի նախկին նախագահ Էվա Աբգարովիչին, ով այդ պաշտոնը զբաղեցրել է 2006-2012թթ., շնորհեց «Արժանիքների արծաթե խաչ» շքանշան: Նա այդ բարձր պարգևին արժանացավ Լեհաստանի հայ համայնքին մատուցած ծառայությունների, անձնուրաց և անշահախնդիր աշխատանքի և լեհահայոց մշակութային ժառանգության պահպանման և տարածման համար[25]:

Հիմնադրամի հովանավորությամբ 2014թ. հրատարկված Մոնիկա Ագոպսովիչի «Կրեսային Պոկուտինա: Հայկական Ռեչ Պոսպոլիտա» ուսումնասիրությունը ճանաչվեց տարվա լավագույն պատմական գիրքը[26]:

Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը 2015թ. մի շարք միջոցառումներ անցկացրեց՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Հիմնադրամը մարտի 13-ին Վարշավայում դրան նվիրված մամուլի ասուլիս կազմակերպեց[27], իսկ մարտի 14-ին «Պատմության հետ հանդիպման տանն» անցկացրեց «Հայեր 2015. Եղեռնի մոխիրներից վեր հառնող ժողովուրդ» խորագրով հանդիպում: ԼՄԺՀ նախագահ Յան Աբգարովիչի բացման խոսքից հետո ելույթ ունեցան ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը և Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը, իսկ Արմեն Արտվիխը և Անդժեյ Զիեմբան հանդես եկան ցեղասպանության մասին դասախո-

[22] Տե՛ս Avedis Աւետիս, 2011 zima, nr. 9, s. 5.
[23] Տե՛ս Avedis Աւետիս, 2012 jesien, nr. 12, s. 1.
[24] Տե՛ս Avedis Աւետիս, 2013 zima, nr. 18, s. 4.
[25] Տե՛ս Avedis Աւետիս, 2013 jesien, nr. 17, s. 3.
[26] Տե՛ս Avedis Աւետիս, 2015 zima, nr. 25, s. 2.
[27] Տե՛ս Avedis Աւետիս, 2015 lato, nr. 22, s. 3.

սություններով: Լեհահայ բանաստեղծ Բոգդան Կասպրովիչն ընթերցեց բանաստեղծություններ իր նոր «Խաչքարեր» ժողովածուից, իսկ պրոֆեսոր Յուզեֆ Նաումովիչը ներկայացրեց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարերն ու հուշարձանները, որոնք սփռված են ամբողջ աշխարհում: Ցուցադրվեց «Հայոց ցեղասպանություն» վավերագրական ֆիլմը: Մարտի 15-ին պատարագ մատուցվեց Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանի հանդիսապետությամբ, որից հետո կարդինալ Կազիմեժ Նիչը հայտարարեց հայ կաթողիկե կենտրոնական ժողովրդապետությունը սուրբ Գրիգոր Նարեկացու անվամբ կոչելու մասին[28]:

ԼՄԺՀ հիմնադրամի նախաձեռնությամբ ապրիլի 15-ին Վարշավայում Մազովեցկեի մշակույթի կենտրոնում Դոմինիկա Մաչիոսը հանդես եկավ «Լեհերը և հայոց ցեղասպանությունը. Պատճառները, ընթացքն ու հետևանքները լեհերի ընկալմամբ սկսած առաջին կոտորածներից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը» դասախոսությամբ:

2015թ. սեպտեմբերի 9-ը՝ Յարոսլավում անցկացվող Կրեսովյան մշակութային 7-րդ միջազգային փառատոնի յոթ օրերից մեկը նվիրվեց հայկական մշակույթին, երաժշտությանը և պատմությանը: Մոնիկա Ագոպսովիչը փառատոնի մասնակիցներին ներկայացրեց լեհահայերի պատմությանն ու մշակութային հարուստ ժառանգությանը նվիրված իր գիրքը: Երեկոյան նրանք ունկնդրեցին հայկական երաժշտություն՝ Յակուբ Կոպչինսկու ղեկավարած տղամարդկանց երգչախմբի կատարմամբ[29]:

ԼՄԺՀ 2015թ. հոկտեմբերի 8-ին Վարշավայում կայացած «Ժառանգություն» անվանումը կրող երկրորդ ցուցահանդեսում ներկայացրեց «Լեհահայոց արխիվ. 10-ամյա ավանդույթ» ցուցադրությունը: Այն միակ հասարակական արխիվն էր ներկայացվածների մեջ, որը դիտվեց մեծ հետաքրքրությամբ[30]:

2015թ. դեկտեմբերի 21-ին Լեհաստանում հայերի փոքրամասնության ներկայացուցիչ Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը, ԼՄՀԺ վարչության նախագահ Յան Աբգարովիչը և Մարիա Օհանովիչ-Տարասիուկը լեհահայերի վիճակն ու նրանց հուզող խնդիրները ներկայացրին Մազովեցկեի նորանշանակ վոյեվոդա Զդիսլավ Սիպերային[31]:

2016թ. մայիսի 14-ին Վարշավայում նշվեց Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկության հիմնադրման 10-ամյակը: Սկզբում պատարագ մատուցվեց, այնուհետև միջացառումը տեղափոխվեց «Պատմության հետ հանդիպման տուն», որին մասնակցում էին հիմնադրամի բարերարները, պետական այրեր, մեծ թվով հայ և լեհ գիտության, արվեստի ու մշակույթի գործիչներ և հյուրեր՝ Լեհաստանի հայաշատ տասը քաղաքներից ու Բեռլինից: Մասնակիցներին ողջու-

[28] Տե՛ս Avedis Աւետիս, 2015 wiosna, nr. 22, s. 1, 3.

[29] Տե՛ս Avedis Աւետիս, 2015 jesien, nr. 24, s. 11.

[30] Տե՛ս Avedis Աւետիս, 2015 jesien, nr. 24, s. 4.

[31] Տե՛ս Avedis Աւետիս, 2016 wiosna, nr. 26, s. 4.

նեցին տան տնօրեն Պիոտր Յակուբովսկին, ԼՄԺՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Յան Աբգարովիչը և ՀՀ դեսպան Է. Ղազարյանը: Մազովեցկե վոյեվոդության Մշակույթի և զբոսաշրջության բաժնի տնօրեն Պավել Յուկրովսկին պատվոգրեր հանձնեց հիմնադրամի գործունեությանն աջակցած մի խումբ լեհահայերի և լեհ հայագետների: Լեհաստանի պետական արխիվների գլխավոր տնօրեն Վոյչեխ Վոզնիակը ներկայացրեց հիմնադրամի և արխիվի համագործակցությունը: Գդանսկի Հայերի միության ղեկավար Գագիկ Պարսամյանը ներկաներին ընթերցեց Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանի շնորհավորական նամակը: Մոնիկա Ագոպսովիչը մասնակիցներին ներկայացրեց Հաննա Կոպչինսկա-Կլոսի և Քրիստինա Իսկրայի կազմած և Անդժեյ Զիեմբայի խմբագրած «Լեհահայեր. Մշակույթ և ժառանգություն» պատկերազարդ ժողովածուն, որտեղ զետեղված են տասնմեկ հեղինակների գիտական հոդվածները:

Հիմնադրամի խորհրդի անդամ Մարիա Օհանովիչ-Տարասիուկը ներկայացրեց հիմնադրամի տասը տարվա գործունեության մասին մանրակրկիտ ու հետաքրքիր ցուցադրություն: Նա հիմնադրամի միջոցներով կատարված կարևոր աշխատանքների թվում կարևորեց «Հայերը Լեհական թագավորությունում և Լիտվայի Մեծ իշխանությունում XVI-XVIII դարերում» եզակի քարտեզը: Լեհահայերի և Հայաստանի պատմության ուշագրավ անցքերի շուրջ հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ Կելցեի Ազգային պատկերասրահի աշխատակից Պավել Գժեշիկը: Հանդիսության ավարտին հիմնադրամի հասցեին ջերմ խոսքեր հնչեցրեց կարդինալ Կազիմեժ Նիչը: Պավել Գժեշիկը հյուրերին ներկայացրեց լեհահայերի ներկայության հետքերը Հին Վարշավայում, որն ավարտեց Սբ. Յացեկի Դոմինիկյան եկեղեցու հայկական ցուցատախտակի մոտ[32]:

2016թ. հունիսի 24-25-ին Պոզնանից ոչ հեռու գտնվող Չրենիավե քաղաքի թանգարանում ԼՄԺՀ հիմնադրամի նախաձեռնությամբ կայացավ գիտաժողով «Հայեր. Պատմություն և մշակույթ» թեմայով: Գիտաժողովում ուշագրավ զեկուցումներով հանդես եկան հիմնադրամի նախագահ Յան Աբգարովիչը, թանգարանի տնօրեն Յան Մաչկովիակը, Լեհաստանի մի շարք համալսարանների տասնյակ պատմաբաններ, բանասերներ ու արվեստագետներ, այդ թվում՝ հայագետներ Քշիշտոֆ Ստոպկան, Գժեգոժ Վոյցեխովսկին, Գժեգոժ Պելչինսկին, Անջեյ Զիեմբան, Դանուտա Պուստելակը և շատ երիտասարդ ուսումնասիրողներ[33]:

ԼՄԺՀ հիմնադրամը դեկտեմբերին հրատարակեց հայ համայնքի շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրած «Լեհահայերի դիմանկարներ 2017» թվով չորրորդ օրացույցը, որի հեղինակ Անդժեյ Զիեմբան ներկայացրել է լեհ հանրությանը ոչ շատ հայտնի 13 անվանի լեհահայերի կյանքն ու գործունեությունը[34]:

ԼՄԺՀ հիմնադրամը և Կրակովի Հայ մշակութային ընկերությունը համատեղ

[32] Տե՛ս Avedis Աւետիս, 2016, lato, nr. 27, s. 6.

[33] Տե՛ս Avedis Աւետիս, 2016 jesien, nr. 28, s. 4.

[34] http://dziedzictwo.ormianie.pl/co obesnie/

2017թ. մայիսի 19-ին Մենլենիցի Անկախության թանգարանում բացեցին Մարիա Բաուչիկի «Հայաստանը փնտրում է ակունքները» լուսանկարների ցուցահանդեսը: Լեհ հասարակության ուշադրությանն արժանացած այս ցուցահանդեսը ներկայացնում էր Հայաստանի բնության գեղեցկությունը, ճարտարապետական հուշարձանները և հայության ներկայիս առօրյան[35]:

ԼՄԺՀ հիմնադրամի և Պիոտրկովի քաղաքապետարանի նախաձեռնությամբ 2017թ. հունիսի 10-ին կայացավ «Հայերը վերադառնում են Պիոտրկով» միջոցառում, որի ընթացքում ներկայացվեց ցուցադրություն՝ «Հայացքն Արարատին: Հայերի ճակատագիրը Լեհաստանում» խորագրով, ինչպես նաև Յուզեֆ Թեոդորովիչին նվիրված ցուցահանդես: Հնչեցին ելույթներ, հայկական երգ ու երաժշտություն[36]:

2017 թ. սեպտեմբերի 11-ին ԼՄԺՀ հիմնադրամը Յարոսլավ քաղաքում անցկացրեց «Հայաստանի օր», որի շրջանակներում Գեղարվեստի պատ-կերասրահում ներկայացրեց «Դեմքով դեպի Արարատը: Հայկական ճակատագիրը Լեհաստանում» ցուցահանդես: Այնուհետև Յարոսլավի լեհահայերը հնչեցրին հայկական երաժշտություն, հանդես եկան ասմունքով և ժողովրդական երգերի կատարմամբ[37]:

2017թ. սեպտեմբերի 18-ին Վարշավայում ԼՄԺՀ հիմնադրամի նախաձեռնությամբ բացվեց Սուրբ Դոմինիկյան եկեղեցու դիմացի պատին փակցված ցուցատախտակը՝ «Հայկական նրբանցք» անվանումով: Դա թվով երրորդ նմանատիպ ցուցատախտակն է Լվովից ու Գդանսկից հետո, որտեղ զետեղված են լեհահայ մի խումբ անվանի մարդկանց անունները: Արքեպիսկոպոս Ռաֆայել Մինասյանի մատուցած պատարագից հետո ելույթ ունեցավ Յակուբ Կոպչինսկու գլխավորած տղամարդկանց երգչախումբը[38]:

Սեպտեմբերի 28-ին Օլավում հիմնադրամն անցկացրեց «Հայկական օր», որի մասնակիցները լսեցին դասախոսություններ, դիտեցին փաստագրական ֆիլմեր՝ նվիրված լեհահայերի պատմությանն ու մշակույթին[39]:

Առաջիկայում հիմնադրամը նախատեսում է հոկտեմբերի 18-ին Պուլտուսկում, իսկ հոկտեմբերի 19-ին՝ Վարշավայում Լեհաստանի մի քանի գիտական հաստատությունների հետ անցկացնել գիտաժողով՝ նվիրված հայոց սփյուռքին, ցեղասպանությանը, պատմությանն ու մշակույթին:

[35] Տե՛ս Avedis Աւետիս, 2017, wiosna, nr. 30, s. 5.

[36] Տե՛ս Avedis Աւետիս, 2017, lato, nr. 31, s. 1, 5.

[37] Տե՛ս Fundacja Kultury i Dziedzictwa Ormian Polskich, http://dziedzictwo.orminie.pl/

[38] Տե՛ս Avedis Աւետիս, 2017 jesien, nr. 32, s. 2.

[39] http://dziedzictwo.orminie.pl/

## Деятельность Фонда культуры и наследия польских армян

***Мовсисян Феликс***

**Резюме**

***Ключевые слова**: польские армяне, культура, наследие, сохранение, фонд, научные конференции, встречи, архив, дни Армении*

Среди армянских общественных организаций, действующих в Республике Польше, своей проармянской патриотической деятельностью выделяется прежде всего Фонд культуры и наследия польских армян. Главной целью этой организации, созданной по инициативе группы общественных деятелей польских армян, является сохранение культурного наследия и ценностей польских армян, а также распространение культуры и истории Речи Посполитой. Добиваясь реализации этих целей, Фонд в течение прошлых лет осуществлял деятельность, достойную похвалы, особое внимание уделяя истории и культуре польских армян. Фонд организовал дни Армении, научные конференции, выставки, встречи, обсуждения, оцифровал архив, относящийся к польским армянам, издал научные исследования, сборники, календари, повествующие о знаменитых армянах Польши.

## The Activities of the "Polish-Armenian Culture and Heritage" Foundation

***Movsisyan Feliks***

**Summary**

***Key words:*** Polish-Armenians, culture, heritage, preservation, foundation, conferences, meetings, archive, Armenian days

Of all the Armenian non-governmental organizations functioning in the Republic of Poland, the "Polish-Armenian Culture and Heritage" Foundation distinguishes itself for its Pro-Armenian activities. The main goal of this organization, founded on the initiative of a group of Polish-Armenians, is the preservation of Polish-Armenians' cultural heritage and values, as well as the dissemination of Rech Pospolita Cresner's culture and history. In order to achieve that goal the Foundation has so far carried out activities worth appreciation, paying special attention to the history and culture of the polish-Armenians. The Foundation has organized Armenian days, conferences, exhibitions, meetings, discussions, has digitalized the archive concerning Polish-Armenians; it has also published scientific studies, collections, and calendars comprising information about famous Polish-Armenians.